2/322/12151

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ
ՆԱԽԱՐԱՐ
Ռ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

«13» 12 2020թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 000128

Ձեռնարկողը՝ ***«Աթենք» ՍՊԸ***
Ք. Երևան, Ծ. Աղբյուրի 59/1

Գործունեությունը՝ ***Գետամեջ համայնքի 1-ին փողոց, 6-րդ փակուղի, 6-րդ հողամաս հասցեում նախատեսվող պահեստի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ***
Կոտայքի մարզ

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի պաշտոնակատար՝

Ա. Թարգյան

Առդիր եզրակացությունը՝ 4 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

թիվ ԲՓ 000128

< 18 > 12 2020թ.

Գետամեջ համայնքի 1-ին փողոց, 6-րդ փակուղի, 6-րդ հողամաս հասցեում նախատեսվող պահեստի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ

Ներածական մաս.

Ձեռնարկող՝	«Աթենք» ՍՊԸ
Փաստաթղթի տեսակը՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ
Գործունեության կատեգորիա՝	«Գ» կատեգորիա
Տեղադրման վայրը՝	Կոտայքի մարզ, Գետամեջ համայնք

«Աթենք» ՍՊ ընկերության կողմից նախատեսվում է Կոտայքի մարզի Գետամեջ համայնքի 1-ին փողոց, 6-րդ փակուղի, 6-րդ հողամաս հասցեում պահեստի կառուցում:

Գործունեությունն իրականացվելու է Կոտայքի մարզի Գետամեջ համայնքի ղեկավարի կողմից տրամադրված 2020թ հուլիսի 30-ի N4 նախագծման թույլտվության (ճարտարապետահատակագծային առաջադրանք) հիման վրա, անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի գրանցման վկայականով ամրագրված՝ 4.8հա մակերեսով հողամասում, նպատակային նշանակությունն արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության է, գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ արդյունաբերական օբյեկտների:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի, 7) կետի ա. ենթակետի համաձայն նախատեսվող գործունեությունը հանդիսանում է Գ կատեգորիայի գործունեության տեսակ:

Նկարագրական մաս. Նախատեսվող գործունեությունն իրականացվելու է Կոտայքի մարզի, Գետամեջ համայնքում: Համայնքը գտնվում է Երևան-Սևան մայրուղուց դեպի արևմուտք 600մ հեռավորության վրա, Ակունք և Հրազդան գետի քարափին՝ սարահարթի վրա, Հրազդան գետի ձախափնյա կիրճի եզրին: Մոտակա բնակելի առանձնատունը գտնվում է դեպի հյուսիս 410մ հեռավորության վրա:

Գործունեության նպատակն է կառուցել պահեստ ընդհանուր 11.044մ^2 մակերեսով և վարձակալությամբ տրամադրել տնտեսվարող սուբյեկտներին: Պահեստում նախատեսված է պահպանել շինարարության ոլորտում օգտագործվող մետաղներ և մետաղական կոնստրուկցիաներ, այդ թվում՝ խողովակ, թիթեղ, շվելեր, երկտավր, ամրան, ամրակար և այլն:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ
ՀՊՇՈ ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
02543763
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ
ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION
OF EXPERTS

Համաձայն նախնական գնահատման հայտի «Աթենք» ՍՊԸ-ի հողատարածքում կան կառուցման փուլում գտնվող սառցարանային տնտեսություն, ընդունող մաս, պահակակետ: Հողատարածքի մնացած մասն ամայի է: Նշված տարածքը նախկինում տրամադրված է եղել Երևան–Սևան արագընթաց երկաթգծի /մոնոռելս/ շինարարության համար: Տարածքն ամբողջությամբ փորված է մոնոռելսի անցկացման համար, այստեղ չկան բնական հողածածկ, բուսածածկ և կենդանիների ապրելավայրեր:

Հողամասն արևմտյան կողմից սահմանակից է «Կամուրջշին» ՍՊԸ-ին, որը զբաղվում է երկաթբետոնե կոնստրուկցիաների արտադրությամբ, իսկ հյուսիս-արևմտյան կողմից՝ «Սարանիստ» ՍՊԸ-ի Գետամեջի մասնաճյուղին, որը զբաղվում է քարերի վերամշակմամբ:

Պահեստն իրենից ներկայացնում է ուղղանկյուն կտրվածքի 121. 15մ x 91.16մ չափերով, մեծաթռիչք ծածկերով, մետաղական սյուներով, առանց պատերի շինություն: Հարկի բարձրությունը հատակից առաստաղ 4-7մ է: Տանիքները երկթեք են՝ ազատ ջրահեռացմամբ:

Շինարարական աշխատանքների համար նախատեսվում է իրականացնել հետևյալ միջոցառումները.

- նախապատրաստել շինհրապարակի տարածքը և ապահովել անխափան մուտք դեպի տարածք,
- բարեկարգել գոյություն ունեցող մոտեցնող ճանապարհը,
- տարածքը մաքրել գրունտի կուտակումներից և աղբից:

Բացի վերը նշված միջոցառումներից, շինարարության ընթացքում նախատեսվում է հանդերձարան, հագուստի չորանոց, լոգարան, գործիքների պահեստ՝ մեկական հատ, 2 բիոզուգարան, ճաշարան՝ պատրաստի սննդի ընդունման համար: Բանվորական աշխատանքի պաշտպանվածությունն ապահովելու նպատակով բանվորներին տրամադրվելու են անհատական պաշտպանության միջոցներ, այդ թվում՝ հատուկ արտահագուստ, պաշտպանիչ գլխարկ, ձեռնոց, կոշիկ և այլն:

Համաձայն նախնական գնահատման հայտի շինարարական աշխատանքները տևելու են 2 տարի, ընդ որում առավել ռիսկային (հողային աշխատանքները և հիմքերի կառուցումը) աշխատանքները կտևեն ընդամենը 7 ամիս, որի ընթացքում օգտագործվելու են շինարարական մեքենաներ և մեխանիզմներ, ներառյալ՝ էքսկավատոր, ավտոկռունկ, բուլդոզեր, ինքնաթափ, ավտոաշտարակ, գլդոն, բետոնմղիչ:

Շինարարական աշխատանքների ընթացքում առաջանալու են թափոններ՝ կենցաղային և շինարարական աղբ մոտ 10մ^3 ծավալով: Թափոնները պարբերաբար տեղափոխվելու են Մասիսի աղբավայր՝ ծառայությունների մատուցման վերաբերյալ պայմանագրի համաձայն: Շինարարական աշխատանքների իրականացման ժամանակ առաջացած 899մ^3 ծավալով հողային զանգվածը կարճաժամկետ պահվելու է շինարարական հրապարակում և օգտագործվելու է որպես հետլիցք:

Շինարարության և շահագործման ընթացքում բնառեսուրսներից օգտագործվելու է ջուր՝ տարածքների, հանվող գրունտի ջրցանի, շինանձնակազմի խմելու և կենցաղային կարիքների համար: Տեխնիկական և խմելու ջրամատակարարումն իրականացվելու է Գետամեջ համայնքի ջրագծից, համաձայն «Վեոլիա ջուր» ՓԲԸ կողմից տրված տեխնիկական պայմանի, իսկ որպես կոյուղի՝ կծառայի հողամասի կենցաղային կեղտաջրերի հավաքման հորը, որի տարողությունը 20մ^3 է, ինչը թույլ կտա ապահովել ավելի քան 1 ամսվա հավաքում: Հավաքված կեղտաջրերը պարբերաբար հատուկ մեքենաներով կտեղափոխվեն մոտակա կեղտաջրերի ցանց:

Համաձայն նախնական գնահատման հայտի ջրցանի համար օրական օգտագործվելու է 1.7մ^3, իսկ խմելու նպատակով՝ 0.3մ^3 ջուր: Պահեստի շահագործման ընթացքում արտադրական ջրօգտագործում չի նախատեսվում:

Շինարարական աշխատանքների ընթացքում և շահագործման փուլում էլեկտրամատակարարումն իրականացվելու է համաձայն տեխնիկական պայմանի:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇՐՋԱԿԱ ՄԻՏՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ
ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION OF EXPERTS
ENVIRONMENTAL IMPACT EXPERTISE CENTER
РА ԵՐԵՎԱՆ, ՇՆՈ 77 ՀՈՒՇԱՄՈՒՏ
РА ЕРЕВАН, ул. ШНО 77
025433

Շինհրապարակում բետոնի շաղախի պատրաստման հանգույց չի նախատեսվում: Բետոնի շաղախը մատակարարվելու է մասնագիտացված ընկերության կողմից:

Շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է տարածքի բարեկարգում և կանաչապատում (2400մ²): Կանաչապատումն իրականացվելու է Գետամեջի համայնքապետարանի հետ համաձայնեցված կանաչապատման նախագծին համապատասխան՝ տարածքում 30 սոսիատերև թխկիների տնկմամբ:

Գնահատման հայտի համաձայն տարածքում բուսահողը բացակայում է: Բուսահողը մատակարարվելու է «Լանդշաֆտ Դիզայն» ՍՊԸ-ի կողմից 12մ³ ծավալով: Կանաչապատ տարածքի ոռոգման աղբյուրը, ձևը և եղանակը համաձայնեցվելու է համայնքապետարանի հետ և իրականացվելու է պայմանագրի հիման վրա:

Նախատեսվող գործունեության ազդեցությունները հիմնականում կապված են լինելու՝ քանդման, փորման, բեռնման, հողային, բետոնային աշխատանքների, հողային զանգվածների և թափոնների տեղափոխման, նյութերի օգտագործման, շինարարական տեխնիկայի ու մեխանիզմների շահագործման, ճանապարհների ծանրաբեռնվածության և արտակարգ իրավիճակների առաջացման հետ:

Համաձայն նախնական գնահատման հայտի նախատեսվում են օդային ավազանի, հողային և ջրային ռեսուրսների աղտոտումից պահպանման, դրանց արդյունավետ օգտագործման, թափոնների կառավարման, աղմուկի մակարդակի և արտակարգ իրավիճակների ռիսկերի նվազեցմանն ուղղված բնապահպանական միջոցառումներ, որոնք ներառված են միջոցառումների ծրագրում և մոնիթորինգի պլանում, այդ թվում՝

- շինարարության ընթացքում օդային ավազան փոշու արտանետումների քանակը նվազեցնելու նպատակով ջրցանի կատարում,
- աղմկահարույց աշխատանքների իրականացումն օրվա ցերեկային ժամերին,
- սորուն նյութերի պահեստների ծածկում՝ համապատասխան բարձրության թաղանթով,
- մեքենաների և տեխնիկայի լվացումը շինհրապարակից դուրս, համայնքում գործող մասնագիտացված կետերում,
- տեխնիկական միջոցների վառելիքի լիցքավորումը և յուղումն իրականացնել շինհրապարակից դուրս՝ լցակայաններում կամ սպասարկման կետերում,
- շինհրապարակում քանդման և շինարարության ընթացքում թափոնների տարանջատում,
- տնկված ծառերի և խոտածածկի խնամք և մոնիթորինգ,
- մթնոլորտային օդ արտանետումների որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ՝ երեք ամիսը մեկ,
- շինարարության ընթացքում աշխատանքի անվտանգության և արտակարգ իրավիճակների կանոնների պահպանում և այլն:

Պատճառաբանական եզրահանգումներ. Նախնական հայտի համաձայն պահեստը կառուցվելու և շահագործվելու է ՀՀ-ում գործող օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան: Նախատեսվող գործունեությունն իրականացվելու է նախկինում կառուցապատված արտադրական հողերի հարևանությամբ, ինչը շրջակա միջավայրի վրա լրացուցիչ ազդեցություններ չի առաջացնելու: Շրջակա միջավայրի վրա ազդեցությունները լինելու են շինարարության փուլում և կրելու են ժամանակավոր բնույթ: Փորձաքննական գործընթացին ներգրավվել են առողջապահության և արտակարգ իրավիճակների նախարարությունները, քաղաքաշինության կոմիտեն, Կոտայքի մարզպետարանը, շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ը: Հայտը լրամշակվել է նաև ստացված դիտողությունների և առաջարկությունների հիման վրա: Օրենսդրությամբ սահմանված կարգով Կոտայքի մարզի Գետամեջ համայնքի ղեկավարի նստավայրում

ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION OF EXPERTS

իրականացվել են հանրային քննարկումներ, ինչի ընթացքում նախատեսվող գործունեության վերաբերյալ հանրությունը դրական է արտահայտվել:

Փորձաքննական պահանջներ

- Մինչև գործունեության իրականացումն անհրաժեշտ է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ստանալ համապատասխան համաձայնությունները և թույլտվությունները:
- Շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է հետևել նախնական գնահատման հայտով ամրագրված բնապահպանական միջոցառումների կատարմանը, ժամանակացույցին, իսկ դրանց չբավարարման դեպքում նախատեսել լրացուցիչ միջոցառումներ՝ ուղղված բնապահպանական և շինարարական նորմերի պահպանմանը:
- Նախատեսվող շինարարական աշխատանքներն անհրաժեշտ է կատարել օրվա սահմանված ժամերին, հնարավորինս նվազագույնի հասցնելով բնակելի տարածքներում աղմուկի և ճանապարհների առավելագույն բեռնվածությունը:
- Նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում պահպանել արտակարգ իրավիճակների և աշխատանքի անվտանգության նորմերը:
- Շինարարական աշխատանքների ընթացքում առաջացող թափոնների կուտակումն ու հեռացումն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:
- Բետոնի տեղափոխումն իրականացնել հայտում նախատեսված ձևով՝ բացառելով շինարարական հրապարակում կամ հարակից տարածքներում բետոնի արտադրությունը:
- Նախագծի շրջանակներում կատարվող շինարարական աշխատանքների ընթացքում պատմամշակութային և հնագիտական շերտերի ի հայտ գալու դեպքում՝ հետագա աշխատանքներն իրականացնել համապատասխան մասնագետի՝ հնագետի եզրակացությունն ստանալուց հետո:
- Նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում պահպանել քաղաքաշինական նորմերը և պահանջները:
- Անհրաժեշտ է ապահովել հայտում ամրագրված կանաչապատման աշխատանքների իրականացումը և խնամքը:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

«Աթենք» ՍՊԸ կողմից ներկայացված Գետամեջ համայնքի 1-ին փողոց, 6-րդ փակուղի, 6-րդ հողամաս հասցեում նախատեսվող պահեստի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտին տրվում է դրական եզրակացություն՝ փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

Տնօրենի տեղակալ՝ Գ. Գևորգյան

Գլխ.մասնագետ՝ Ա. Վարդանյան